# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2022 թվականի N 121-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 3-րդ և 18-րդ հոդվածի 4-րդ կետերով.

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2021-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳԱԼՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԱՏԻՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ**

2022թ. մայիսի 20
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՄԱՅՆՔԻ 2021-2026 ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.05.2022Թ. ԹԻՎ 121-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

- 2022 –

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Սիրելի՛ արմավիրցիներ, Արմավիր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ) ներկայացնում է համայնքի զարգացման տեսլականն առաջիկա հինգ տարիների համար՝ սահմանելով զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտները. այն գործառական փաստաթուղթ է, որը սահմանում է գործողություններն ու արդյունքները, ինչպես նաև ծրագրի համար հասանելի ֆինանսական միջոցները:
Հակիրճ նկարագրված են համայնքի խնդիրները, զարգացման խոչընդոտները և դրանց ծնող պատճառները, անդրադարձ է կատարվում ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացին՝ նշելով դրա մասնակցային բնույթը:
Արմավիրի ՀՀԶԾ կազմման և իրագործման համար առանձնահատուկ և առանցքային հենք է հանդիսանում համայնքի կառավարման արդյունավետության բարձրացումը և կայուն զարգացումը, մարդկանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը, հանրային տարածքների և շրջակա միջավայրի պահպանությունը, աշխատատեղերի ստեղծման խթանումը, աշխատանքների արդյունավետության բարձրացումը:
Ուշադրության կենտրոնում է լինելու գյուղատնտեսության ոլորտը: Արդեն իսկ սկսվել են ուսումնասիրություններ ոռոգման ցանցի հնարավոր ընդլայնման համար, առաջիկայում աշխատանքներ են նախատեսում չշահագործվող խորքային հորերի գույքագրման և վերագործարկման ուղղությամբ՝ ինչը առաջնահերթ խնդիր է գյուղաբնակ մեր քաղաքացիների համար:
Արմավիր համայնքի առաջիկա հինգ տարիների համար զարգացման հիմնական ուղղություններ և գերակա ոլորտներ են սահմանվում քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, կրթության, մշակույթի, շրջակա միջավայրի, առողջ ապրելակերպի, սոցիալական պաշտպանության և գյուղատնտեսության ոլորտները:
Համայնքի տեսլականն է Արմավիրը դարձնել անվտանգ, հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայր, այցելուների համար գրավիչ, ձեռնարկատիրության զարգացման համար նպաստավոր, զարգացած ենթակառուցվածքներ ունեցող, բարեկարգ, մաքուր ու գրավիչ բնակավայր:

Նախանշված տեսլականը կյանքի կոչելու և շոշափելի արդյունքի հասնելու համար վերջին 4 տարիների բավարար ֆինանսական հավաքագրումների, բյուջեի նպատակային ծախսերի, անհրաժեշտ վերահսկողության և աշխատանքի արդյունքում համայնքում հնարավոր է եղել զգալիորեն բարելավել կոմունալ ենթակառուցվածքների, տրանսպորտի և ճանապարհաշինության, շրջակա միջավայրի, կրթության՝ մասնավորապես նախադպրոցական հաստատությունների, մշակույթի և սպորտի, սոցիալական պաշտպանության ոլորտների վիճակը:
Նշված տարիների ընթացքում համայնքում հիմնանորոգվել է մոտ 4,6 կմ երկարությամբ գլխավոր նշանակության ճանապարհ և բակային տարածք: Կատարվել է մոտ 8000 $մ^2$ մակերեսով փոսալցման աշխատանքներ: Քաղաքում անցկացվել է 32 կմ երկարությամբ լուսավորության

ցանց՝ էներգախնայող LED լուսատուներով: Կառուցվել է նոր զբոսայգի, պուրակ, բարեկարգվել է քաղաքային զբոսայգին՝ կահավորվելով նոր ատրակցիոններով: Նորով է փոխարինվել քաղաքի խմելու ջրի հին ցանցը: Վերանորոգվել են մանկապարտեզներ, կահավորվել՝ նոր գույքով: Խոշորացման ծրագրի մեր առաջնային նպատակն է լինելու ուշադրության կենտրոնում պահել գյուղնշանակության խնդիրները, հարցերը և բնակիչների համար բարեկարգ դարձնել գյուղական բնակավայրերը:

Հարգելի՛ արմավիրցիներ, համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքային տեսլականի, նպատակների, ձգտումների և ջանքերի ամփոփումն է մեկ փաստաթղթում, որը համայնքի ապագայի մասին երկարաժամկետ պատկերացումների ամբողջությունն է և պարունակում է այն արդյունքները, որին ձգտում է համայնքը, արտացոլում է այն հարցերը, որոնք համայնքի բնակչության տեսանկյունից առավել կարևորներն են: ՀՀԶԾ-ն համայնքի յուրաքանչյուր բնակչի փաստաթուղթն է:

Ուստի կարևորվել է համայնքի ամբողջ բնակչության՝ քաղաքային և գյուղական հասարակության կազմակերպությունների, գործարար շրջանակների մասնակցությունն ու օժանդակումը, ինչպես նաև հետագայում վերահսկողությունը ներկայացված աշխատանքներին, քանզի մասնակցային կառավարումն է ժողովրդավարության ամենակարևոր բաղադրիչը, մասնակցային կառավարումն է ընդգծում այն մարդկանց ներգրավումը կառավարման մեջ, որոնք դուրս են մնացել ավանդական կառավարման գործընթացից:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրությունը

### 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Արմավիր համայնքը խոշորացել է 2021 թվականի ՏԻՄ ընտրության արդյունքներով: Համայնքում ներառված է 1 քաղաքային և 10 գյուղական բնակավայր:

Համայնքի ընդհանուր բնակչության թիվը կազմում է 65164 մարդ, որից՝

31766 - տղամարդ
33398 - կին
9472 – մեծահասակ

Արմավիր խոշորացված համայնքը զբաղեցնում է 14950,3 հա տարածք:

**Արմավիր համայնքի զբաղեցրած տարածքը՝ ըստ բնակավայրերի. (հա)**

| Ք. Արմավիր | Գ. Նորավան | Գ. Մյասնիկյան | Գ. Մայիսյան | Գ. Հացիկ | Գ. Խանջյան | Գ. Սարդարապատ | Գ. Լենուղի | Գ. Այգեվան | Գ. Արաքս | Գ. Լուկաշին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2182 | 413,5 | 3120,7 | 1990 | 1355,9 | 782,2 | 1586 | 785 | 627 | 1071,6 | 1036,4 |

Արմավիր համայնքի քաղաքային բնակավայրը համարվում է ՀՀ Արմավիրի մարզի մարզկենտրոն, մայրաքաղաքից հեռավորությունը 44 կմ է: Արմավիր համայնքով են անցնում

Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհը, Արմավիր-Իսահակյան-Գյումրի հանրապետական նշանակության ավտոճանապարհը և Երևան-հյուսիսային Կովկաս երկաթգիծը:

Արմավիրում առկա են արդյունաբերական և վերամշակող ձեռնարկություններ և արտադրական տարածքներ, որոնց վերագործարկումը կնպաստի համայնքի զարգացմանը, սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը, կրթական և մշակութային կյանքի ակտիվացմանը, տուրիզմի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Արմավիրի գյուղական բնակավայրերը նման են իրար խնդիրներով, կենցաղով: Գյուղական բնակավայրերի առաջնահերթ համարվող խնդիրներն են ոռոգման և խմելու ջրերի համակարգերի արդիականացումը, փողոցային լուսավորությունների ամբողջական անցկացումը, փողոցների ասֆալտապատումը, մանկապարտեզների և բուժհաստատությունների վերանորոգումը և այլն:

## 2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

| | Ք. Արմա-վիր | Գ. Նորա-վան | Գ. Մյասնիկ-յան | Գ. Մյաիս-յան | Գ. Ջացիկ | Գ. Խանջ-յան | Գ. Սարդարա-պատ | Գ. Լենու-ղի | Գ. Այգե-վան | Գ. Արաքս | Գ. Լուկա-շին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը բնակչություն | 38495 | 1344 | 4423 | 2013 | 2488 | 2022 | 6338 | 1694 | 1641 | 2090 | 2616 |
| 0-17 տարեկան, ընդամենը | 8406 | 318 | 866 | 473 | 453 | 372 | 1998 | 68 | 377 | 344 | 608 |
| 18-62 տարեկան, ընդամենը | 23793 | 855 | 3004 | 1341 | 1812 | 1498 | 3460 | 1463 | 1077 | 1492 | 1683 |
| 63 և ավելի տարեկան, ընդամենը | 6296 | 171 | 553 | 199 | 227 | 152 | 880 | 163 | 187 | 254 | 325 |
| Բնակավայրի ընտանեկան նպաստի համակարգում փաստագրված ընտանիքների թիվը | 874 | 33 | 115 | 35 | 20 | 28 | 90 | 37 | 20 | 34 | 51 |

Համայնքի 2022թ. ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 2091514,0 հազար դրամ

Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները.

## ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԳՈՅԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Համայնքի 2022թ. բյուջեի կանխատեսվող մուտքերը — 2091514,0 հազար ՀՀ դրամ

Սեփական եկամուտներ 100719,5 հազար ՀՀ դրամ, որը կազմում է 48,44 % ընդհանուր եկամուտների մեջ
Պետության կողմից պատվիրակված լիազորությունների համար միջոցները 5997,0 հազար ՀՀ դրամ
Պետական բյուջեից տրվող պաշտոնական դրամաշնորհներ 107832,1 հազար ՀՀ դրամ
Գույքահարկեր 632546,0 հազար ՀՀ դրամ, որից
Անշարժ գույքի հարկ 208022,4 հազար ՀՀ դրամ
Փոխադրամիջոցների գույքահարկ 423523,6 հազար ՀՀ դրամ
Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքերը նախատեսվել է 55061,3 հազար ՀՀ դրամ
Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարների գծով՝ պետական տուրք նախատեսվել է 32300,0 հազար ՀՀ դրամ՝ հիմք Նոտարի և ՔԿԱԳ-ի կողմից տարված կանխատեսման հաշվարկները:
Պաշտոնական դրամաշնորհի գծով 1078321,5 հազար ՀՀ դրամ, որից համահարթեցման դոտացիա 1076360,7 հազար ՀՀ դրամ՝ հիմք « 2022թ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը և նպատակային հատկացումներ/ սուբվենցիաներ/ 1960,8 հազար ՀՀ դրամ
Այլ եկամուտների գծով նախատեսվել է 222527,8 հազար ՀՀ դրամ

Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում հիմնականում առկա են արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք կամ չեն գործում կամ գործում են իրենց երբեմնի արտադրական չնչին հզորություններով, դրանք են պահածոների գործարանը, ռելեի գործարանը, ֆուրնիտուրայի գործարանը, հաստոցաշինական գործարանը, հացի և հրուշակեղենի գործարանը, կահույքի ֆաբրիկան:

Հիմնականում գործում են Երևանի Արարատ կոնյակի գործարանի Արմավիրի մասնաճյուղը, Գազպրոմ Արմենիա Արմավիրի գազասարքավորումների գործարանը, Լայթս Մեթալս Ինդուստրիա ՍՊԸ, Արմավիրի ե/բ կոնստրուկցիաների գործարան ՍՊԸ, մասնավոր հատվածում գյուղմթերքների վերամշակման փոքր ծավալներով արտադրամասերը, կահույքի պատրաստման արտադրամասերը, հացի և հրուշակեղենի արտադրամասերը, որոնց արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում և ԵՏՄ տարածքի երկրներում:

Արմավիր համայնքի գյուղական բնակավայրերում՝ Լենուղում, Հացիկում, Մյասնիկյանում և Լուկաշինում կան գինու արտադրության գործարաններ, որից հայտնին Լենուղում գործող <<Մապ >> գինու, կոնյակի գործարանն է:

Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գործում է Բժշկական Կենտրոն՝ նախատեսված 130+6 մահճակալով և Ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություն, բացի այդ մասնավոր հատվածում գործում են ախտորոշիչ ծառայություն մատուցող և ստոմատոլոգիական գործունեություն իրականացնող կենտրոններ:

Գյուղական բնակավայրերից Արաքսում է գտնվում պատմամշակութային վայր համարվող Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը՝ ուր ամեն տարի մայիսի 28-ին նշվում է Հանրապետության տոնը և որը համարվում է զբոսաշրջային վայր հազարավոր զբոսաշրջիկների և տեղացիների համար:

Մյասնիկյան գյուղում այս տարի նախատեսվում է Տարածքային զարգացման հիմնադրամի աջակցությամբ կառուցել ֆուտբոլի, բասկետբոլի և վոլեյբոլի մարզադաշտ նաև COAF սմարթ համալիր:

Բոլոր գյուղերում կա դպրոց, բժշկական ամբուլատորիա՝ որը սպասարկում է տվյալ գյուղի ողջ բնակչությանը, մանկապարտեզ, վաճառքի կենտրոններ և այլ օբյեկտներ:

**Համայնքի կրթական հաստատությունները.**

| **Բնակավայր** | **Կրթական հաստատություն Դպրոց** | | **Կրթական հաստատություն Նախադպրոցական** | | **Կրթական հաստատություն Միջին մասնագիտական** | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Քանի հոգու համար է նախատեսված** | **Քանի հոգի է փաստացի հաճախում** | **Քանի հոգու համար է նախատեսված** | **Քանի հոգի է փաստացի հաճախում** | **Քանի հոգու համար է նախատեսված** | **Քանի հոգի է փաստացի հաճախում** |
| Ք. Արմավիր | 7890 | 4956 | 1235 | 1129 | 1210 | 947 |
| Նորավան | 250 | 216 | - | - | | |
| Մյասնիկյան | 713 | 520 | 120 | 114 | | |
| Խանջյան | 240 | 236 | - | - | | |
| Հացիկ | 600 | 252 | - | - | | |
| Մայիսյան | 310 | 201 | - | - | | |
| Լուկաշին | 570 | 263 | 90 | 83 | | |
| Լենուղի | 450 | 207 | - | - | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Այգեվան | 250 | 205 | - | - | | |
| Արաքս | 290 | 182 | - | - | | |
| Սարդարապատ | 700 | 709 | 90 | 73 | | |

## 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Արմավիր համայնքում 2022-2023 տարիների համար հստակ պլանավորած/մեկնարկը տված ծրագրերը՝ ստորև.

| Բնակավայր | Ծրագրի անվանումը | Ֆինանսավորող | Ծրագրի արժեք | Ծրագրի նպատակ/ցուցանիշներ |
|---|---|---|---|---|
| Արմավիր համայնք (բոլոր բնակավայրերը) | ● Թափոնների տեսակավորման՝ թվով 70 աղբամանների տեղադրում համայնքի բոլոր բնակավայրերում: | ● ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանություն | ≈38600000 ՀՀ դրամ | Շրջակա միջավայրի պահպանություն: |
| | ● Գյուղատնտեսության աջակցության և կոմունալ ծառայությունների բարելավման նպատակով տեխնիկաների ձեռք բերում: | ● Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամ/համայնք | 290000000 ՀՀ դրամ | Գյուղատնտեսության աջակցություն, կոմունալ ծառայությունների բարելավում |
| | ● Արմավիրի բաց երիտասարդական կենտրոնի հիմնում | ● Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն/ Unicef/ համայնք | 40000000 ՀՀ դրամ | Համայնքի երիտասարդների զարգացման խթանում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ք. Արմավիր | • Արմավիր քաղաքի Մ. Գորկի փողոցի հիմնանորոգում:<br><br>• Արմավիր քաղաքի թիվ 2, թիվ 3 և թիվ 7 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ների ջեռուցման համակարգի կառուցում, գազաֆիկացում, հին դռների և պատուհանների փոխարինում՝ նորով: | •Համայնք/պետական բյուջե<br><br>•Համայնք/պետական բյուջե | 275173420 ՀՀ դրամ<br><br>**260859750 ՀՀ դրամ**<br>**26084320 ՀՀ դրամ**<br>**34395760 ՀՀ դրամ** | Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի գլխավոր նշանակության՝ դեպի գերեզմաններ տանող ճանապարհի հիմնանորոգում<br><br>Կբարելավվի երեխաների համար անվտանգության, խնամքի և կրթության համար անհրաժեշտ միջավայրը՝ այդ թվում շենքային և սանիտարական պայմանները, որն էլ կապահովի զարգացնող առարկայական միջավայր: |
| Նորավան | •Նորավան գյուղում մոդուլային մանկապարտեզի կառուցում | •Պետական բյուջե | | Նախադպրոցական տարիքի երեխաների կրթման և զարգամման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծում: |
| Մյասնիկյան | •Մյասնիկյան գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում և սանհանգույցի | •Համայնք/պետական բյուջե<br><br>• Հայաստանի | **19072840 ՀՀ դրամ** | Կբարելավվի երեխաների համար անվտանգության, խնամքի և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վերանորոգում<br><br>●Մյասնիկյան գյուղում ֆուտբոլի, բասկետբոլի և վոլեյբոլի մինի մարզադաշտի կառուցում<br><br>● Մյասնիկյան գյուղում COAF սմարթ համալիրի հիմնում | Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամ/համայնք | **38000000 ՀՀ դրամ** | կրթության համար անհրաժեշտ միջավայրը:<br><br>Երիտասարդների շրջանում սպորտային կյանքի միջավայրի բարելավում: |
| Խանջյան | ●Խորքային հորերի վերականգնում,<br><br>●Լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում: | Համայնքային բյուջե | 10.000.000 դ.<br><br>3.500.000դ. | Գյուղատնտեսության աջակցություն:<br><br>Բնակավայրի ենթակառուցվածքների բարելավում: |
| Հացիկ | ●Խորքային հորերի վերականգնում,<br><br>●Լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում: | Համայնքային բյուջե | 10.000.000 դ.<br><br>3.500.000դ. | Գյուղատնտեսության աջակցություն:<br><br>Բնակավայրի ենթակառուցված քների բարելավում: |
| Մայիսյան | ●Խորքային հորերի վերականգնում,<br><br>●Լուսավորության ցանցի, ընդլայնում և արդիականացում: | Համայնքային բյուջե | 10.000.000 դ.<br><br>3.500.000դ. | Գյուղատնտեսության աջակցություն:<br><br>Բնակավայրի ենթակառուցված քների բարելավում: |
| Լուկաշին | ●Լուկաշին գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում | ●Համայնք/պետական բյուջե | 15283935 դ. | Կբարելավվի երեխաների համար անվտանգության, խնամքի և կրթության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | համար անհրաժեշտ միջավայրը: |
| Լենուղի | ●Լենուղի գյուղի ջրամատակարարման ցանցի վերակառուցում:<br>●Լենուղի գյուղում մոդուլային մանկապարտեզի կառուցում | ●Համայնք/պետական բյուջե<br>●Պետական բյուջե | **90,898,760 ՀՀ դրամ** | Բնակչության կենցաղային պայմանների բարելավում<br>Նախադպրոցական տարիքի երեխաների կրթման և զարգաման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծում: |
| Այգեվան | ●Այգեվան գյուղի ջրամատակարարման ցանցի վերակառուցում:<br>●Այգեվան գյուղում մոդուլային մանկապարտեզի կառուցում | ●Համայնք/պետական բյուջե<br>●Պետական բյուջե | **132,178,860 ՀՀ դրամ** | Բնակչության կենցաղային պայմանների բարելավում<br>Նախադպրոցական տարիքի երեխաների կրթման և զարգաման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծում: |
| Արաքս | ●Արաքս գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգում: | ●Համայնք/պետական բյուջե | | Նախադպրոցական տարիքի երեխաների կրթման և զարգաման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծում: |
| Սարդարապ | ●Սարդարապատ գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի | ●Համայնք/պետ | | Կբարելավվի երեխաների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ատ | հիմնանորոգում | ական բյուջե | | համար անվտանգության, խնամքի և կրթության համար անհրաժեշտ միջավայրը: |

## 2.4 Համայնքի 2021թ. Բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2022-2026թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հազար դրամ

| Հ/Հ | Մուտքերի անվանումը | 2021թ. Փաստ | 2022թ. նախատ | 2023թ. կանխ | 2024թ. կանխ | 2025թ. կանխ | 2026թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | **ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*** | **2414992.1** | **2518827.3** | **2140635.3** | **2227243.8** | **2362639.6** | **2478038.3** |
| I. | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*** | **1981375.7** | **2091514.0** | **2116635.3** | **2201243.8** | **2334639.6** | **2448038.3** |
| 1. | **ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** | **525419.8** | **718907.3** | **735072.0** | **796475.5** | **914422.0** | **1004020.0** |
| 1.1 | **Գույքային հարկեր անշարժ գույքից** | **138994.3** | **208022.4** | **228825.0** | **251707.5** | **276878.0** | **304560.0** |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 95708,9 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | Հողհարկ | 43285,4 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ | | 208022.4 | 228825.0 | 251707.5 | 276878.0 | 304560.0 |
| 1.2 | **Գույքային հարկեր այլ գույքից** | **315820.9** | **423523.6** | **445680.0** | **480248.0** | **528272.0** | **581100.0** |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 315820,9 | 423523.6 | 445680.0 | 480248.0 | 528272.0 | 581100.0 |
| 1.3 | **Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | **35838.0** | **55061.3** | **60567.0** | **64520.0** | **70972.0** | **78060.0** |
| | Տեղականտուրքեր | 35838.0 | 55061.3 | 60567.0 | 64520.0 | 70972.0 | 78060.0 |
| 1.4 | **Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ** | **34766.6** | **32300.0** | **34300.0** | **36300.0** | **38300.0** | **40300.0** |
| | Պետականտուրքեր | 34766.6 | 32300.0 | 34300.0 | 36300.0 | 38300.0 | 40300.0 |
| 1.5 | **Այլհարկային եկամուտներ** | | | | | | |
| | Այլհարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | | |
| | Հողհարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկեր ի գումարների նկատմամբ | | | | | | |
| 2. | **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | **1238986.9** | **1078321.5** | **1078560.7** | **1078560.7** | **1078560.7** | **1078560.7** |
| 2.1 | Ընթացիկարտաքինպաշտոնականդրամաշնորհներ | | | | | | |
| 2.2 | Կապիտալարտաքինպաշտոնականդրամաշնորհներ | | | | | | |
| 2.3 | Ընթացիկներքինպաշտոնականդրամաշնորհներ | **1108198.6** | **1078321.5** | **1078560.7** | **1078560.7** | **1078560.7** | **1078560.7** |
| ա) | Պետական բյուջեիցֆինանսականհամահարթեցմանսկզբունքովտրամադրվողդոտացիաներ | 1105801.2 | 1076360.7 | 1076360.7 | 1076360.7 | 1076360.7 | 1076360.7 |
| բ) | Պետականբյուջեիցտրամադրվողայլդոտացիաներ | | | | | | |
| գ) | Պետականբյուջեիցտրամադրվողնպատակայինհատկացումներ (սուբվենցիաներ) | 2397.4 | 1960.8 | 2200.0 | 2200.0 | 2200.0 | 2200.0 |
| դ) | ՀՀ այլհամայնքներիբյուջեներիցընթացիկծախսերիֆինանսավորմաննպատակովստացվողպաշտոնականդրամաշնորհներ | | | | | | |
| 2.4 | Կապիտալներքինպաշտոնականդրամաշնորհներ | **130788.3** | | | | | |
| ա) | Պետականբյուջեիցկապիտալծախսերիֆինանսավորմաննպատակայինհատկացումներ (սուբվենցիաներ) | 130788.3 | | | | | |
| բ) | ՀՀ այլհամայնքներիցկապիտալծախսերիֆինանսավորմաննպատակովստացվողպաշտոնականդրամաշնորհներ | | | | | | |
| 3. | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | **216969.0** | **294285.2** | **303002.6** | **326207.6** | **341657.6** | **365457.6** |
| 3.1 | Տոկոսներ | | | | | | |
| 3.2 | Շահաբաժիններ | | | | | | |
| 3.3 | **Գույքի վարձակալությունից եկամուտներ** | **40359.0** | **45342.7** | **45757.6** | **45957.6** | **46157.6** | **46357.6** |
| | Համայնքիսեփականությունհամարվողհողեր իվարձակալությանվարձավճարներ | 36847.0 | 42257.6 | 42257.6 | 42257.6 | 42257.6 | 42257.6 |
| | Համայնքիվարչականտարածքումգտնվողպետականսեփականությունհամարվողհողերիվարձակալությանվարձավճարներ | | | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 3512.0 | 3085.1 | 3500.0 | 3700.0 | 3900.0 | 4100.0 |
| 3.4 | **Համայնքիբյուջեիեկամուտներապրանքներիմատակարարումիցևծառայություններիմատուցումից, այդթվում** | **7376.4** | **5997.0** | **6600.0** | **6900.0** | **7200.0** | **7500.0** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 7376.4 | 5997.0 | 6600.0 | 6900.0 | 7200.0 | 7500.0 |
| | | | | | | | |
| **3.5.** | **Վարչականգանձումներ** | **160918.5** | **230637.0** | **243445.0** | **264850.0** | **279100.0** | **301700.0** |
| | Տեղական վճարներ | 145472.5 | 198737.0 | 201500.0 | 221650.0 | 243000.0 | 256000.0 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 15446.0 | 31900.0 | 34100.0 | 35100.0 | 36100.0 | 37100.0 |
| | Օրենքովսահմանվածդեպքերումհամայնքայի նիմնարկներիկողմիցառանցտեղականտուր քիգանձմանմատուցվողծառայություններիկա մկատարվողգործողություններիդիմացստաց վող (գանձվող) վճարներ | **5999.8** | **7168.5** | **7845.0** | **8100.0** | **8400.0** | **8600.0** |
| **3.6** | Մուտքեր տույժերից, տուգանքներից | **6100.0** | **4000.0** | **5000.0** | **6000.0** | **6500.0** | **7000.0** |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 6100.0 | **4000.0** | **5000.0** | **6000.0** | **6500.0** | **7000.0** |
| | Մուտքերհամայնքիբյուջեինկատմամբստանձ նածպայմանագրայինպարտավորություններ իչկատարմանդիմացգանձվողտույժերից | | | | | | |
| **3.7** | **Ընթացիկոչպաշտոնականդրամաշնորհներ** | | | | | | |
| **3.8** | **Կապիտալոչպաշտոնականդրամաշնորհներ** | | | | | | |
| **3.9** | Այլեկամուտներ* | **2215.1** | **1140.0** | **2200.0** | **2500.0** | **2700.0** | **2900.0** |
| | Համայնքիգույքինպատճառածվնասներիփոխ հատուցումիցմուտքեր | | | | | | |
| | Վարչականբյուջեիպահուստայինֆոնդիցֆոն դայինբյուջեկատարվողհատկացումներիցմու տքեր | | | | | | |
| | Օրենքով և իրավական այ լակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 2215.1 | 1140.0 | 2200.0 | 2500.0 | 2700.0 | 2900.0 |
| II. | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4) | **58726.9** | | **24000,0** | **26000.0** | **28000.0** | **30000.0** |
| 1. | Հիմնականմիջոցներիիրացումիցմուտքեր | | | | | | |
| | Անշարժգույքիիրացումիցմուտքեր | | | | | | |
| | Շարժականգույքիիրացումիցմուտքեր | | | | | | |
| | Այլհիմնականմիջոցներիիրացումիցմուտքեր | | | | | | |
| 2. | Պաշարներիիրացումիցմուտքեր | | | | | | |
| 3. | Բարձրարժեքակտիվներիիրացումիցմուտքեր | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | Չարտադրվածակտիվներիիրացումիցմուտքեր | **58726.9** | | **24000,0** | **26000.0** | **28000.0** | **30000.0** |
| | Հողիիրացումիցմուտքեր | **58726.9** | | **24000.0** | **26000.0** | **28000.0** | **30000.0** |
| | Ոչնյութականչարտադրվածակտիվներիիրացումիցմուտքեր | | | | | | |
| III. | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | **374889.5** | **427313.3** | | | | |
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | | | | | | |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումիցմուտքեր | | | | | | |
| | -հիմնականգումարիմարում | | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | | |
| | -վարկերիստացում | | | | | | |
| | -ստացվածվարկերիհիմնականգումարիմարում | | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | | |
| | -բյուջետայինփոխատվություններիստացում | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | |
| 2. | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | **374889.5** | 427313.3 | | | | |
| 2.1 | Բաժնետոմսեր և կապիտալումմասնակցություն | | | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | | |
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբհողերի), այդթվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալումմասնակցությունձեռքբերում | | | | | | |
| 2.2 | Փոխատվություններ | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | -նախկինումտրամադրվածփոխատվություննե րիդիմացստացվողմարումներիցմուտքեր | | | | | | |
| | -փոխատվություններիտրամադրում Համայնքիբյուջեիմիջոցներիտարեսկզբիազա տմնացորդը | | | | | | |
| 2.3 | Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ միջոցները | 374889.5 | 427313.3 | | | | |
| 2.4 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | | | | |
| 2.5 | Համայնքիբյուջեիֆոնդայինմասիժամանակավ որազատմիջոցներիցվարչականմաստրամադր վածմիջոցներիվերադարձֆոնդայինմաս | | | | | | |
| 2.6 | Համայնքիբյուջեիհաշվումմիջոցներիմնացորդ ներըհաշվետուժամանակահատվածում | | | | | | |
| | որից՝ ծախսերիֆինանսավորմանըչուղղվածհամայն քիբյուջեիմիջոցներիտարեսկզբիազատմնացոր դիգումարը | | | | | | |
| Բ. | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | | | |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումիցմուտքեր | | | | | | |
| | -հիմնականգումարիմարում | | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | | |
| | -վարկերիստացում | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | | |
| | -փոխատվություններիստացում | | | | | | |
| | -Ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | |

ՀՁՔԾ-ում ընդգրկված 2021թ. Բյուջեի կատարված ցուցանիշները և 2022-2026թթ. ծախսերի կանխատեսումը

| Հ/հ | Ծրագրի անվանումը | 2021թ փաստ | 2022թ պլանավ | 2023թ կանխ | 2024թ կանխ | 2025թ կանխ | 2026թ կանխ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 544969.6 | 501460.0 | 521606.0 | 533770.0 | 569600.0 | 577000.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Ոռոգում | 23734.1 | 37182.6 | 39300.0 | 41500.0 | 43200.0 | 46400.0 |
| 3 | Ճանապարհային տրանսպորտ | 424324.2 | 258923.6 | 256554.3 | 281955.8 | 306970.0 | 340653.0 |
| 4 | Աղբահանում | 177492.2 | 246197.6 | 245300.0 | 257300.0 | 274400.0 | 297440.0 |
| 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 0 | 0 | | | | |
| 6 | Ջրամատակարարում | 162922.0 | 112145.0 | 123250.0 | 136775.0 | 154233.0 | 165460.0 |
| 7 | Փողոցների լուսավորում | 49520.4 | 53620.5 | 55980.0 | 57425.0 | 59624.0 | 62791.0 |
| 8 | Բնակարանային շինություն և կոմունալ ծառ. | 5188.8 | 7380.0 | 8900.0 | 9600.0 | 10700.0 | 12000.0 |
| 9 | Գրադարաններ | 34854,5 | 30272.7 | 32375.0 | 34195.0 | 36200.0 | 38120.0 |
| 10 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 39566.7 | 30458.7 | 32578.0 | 34463.0 | 36925.6 | 39300.0 |
| 11 | Այլ մշակութային կազմակերպություններ | 26165.7 | 33851.9 | 35852.0 | 38260.0 | 40387.0 | 44500.0 |
| 12 | Նախադպրոցական կրթություն | 459108.2 | 614126.0 | 613000.0 | 623000.0 | 648000.0 | 665374.3 |
| 13 | Արտադպրոցական դաստիարակություն | 145153.6 | 151905.9 | 151940.0 | 154000.0 | 156400.0 | 161000.0 |
| 14 | Սոց ապահովություն | 32599,6 | 23000.0 | 24000.0 | 25000.0 | 26000.0 | 28000.0 |
| 15 | Պահուստային ֆոնդ | 0,0 | 418302.8 | | | | |
| | **Ընդամենը** | **2125599.6** | **2518827.3** | 2140635.3 | **2227243.8** | **2362639.6** | **2478038.3** |

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը:
Այդ նպատակով Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական կայքում թարմացման ռեժիմով գործում է Արմավիր համայնքի տարեկան ինտերակտիվ բյուջեն, որը հնարավորություն է ընձեռում առցանց տեղեկացված լինել ֆինանսական շրջանառության մասին:
Արդեն իսկ կայացվել է բյուջեի վերաբերյալ հանրային քննարկումների, բաց լսումների ինստիտուտը:

## 2.5 Համայնքի զարգացման խոչընդոտները և դժվարությունները

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններից է գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը: Այս ոլորտում առկա են մի շարք խոչընդոտող գործոններ, որոնք պայմանավորված են բանկերի ձեռնարկատիրության նպատակով տրամադրվող վարկային քաղաքականության հետ: Դժվարություններ կան արտադրանքի իրացման հատկապես արտաքին շուկա արտահանման գործում, հարկային քաղաքականության հետ կապված արտոնությունների սահմանման հետ: Դժվարություններ կան համայնք-գործարար փոխհարաբերություններում պայմանավորված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, ինչպես նաև համայնքի սեփականություն համարվող գույքի օգտագործման և ենթակառուցվածքներից օգտվելիս առաջացած խնդիրների հետ:

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներից է համայնքի գույքի ոչ նպատակային և արդյունավետ կառավարումը:

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ցանկում են ներառված նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների զբաղեցրած շենքերը և շինությունները իրենց զբաղեցրած տարածքները և օժանդակ շինությունները, համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենքերը և տարածքները, որոնց մեծ մասը տարիների ընթացքում ոչ ճիշտ շահագործման և վերանորոգման աշխատանքների բացակայության պատճառով ունեն հիմնանորոգման, որոշակի դեպքերում ուժեղացման կարիք, ունեն վթարային շենքի կարգավիճակ: Կան առանձին շենքեր, որոնց պահման և ուժեղացման նպատակահարմարությունը որոշելու համար անհրաժեշտ է մասնագիտական, ֆինանսատնտեսագիտական հաշվարկ կատարել: Համայնքի քաղաքային բնակավայրի 11 նախադպրոցական ուսումնական հաստատություններից 4-ն են հիմնորոգված և ջեռուցվում են, մնացած 7 մանկապարտեզները ունեն ուժեղացման, հիմնանորոգման և ջեռուցման համակարգերի կառուցման, գազաֆիկացման անհրաժեշտություն:
Գյուղական բնակավայրերից մի քանիսը նույնիսկ չունեն նախադպրոցական ուսումնական հաստատություններ:
Համայնքային ենթակառուցվածքները՝ ճանապարհները, ոռոգման համակարգերը, փողոցային լուսավորության և ճանապարհային երթևեկության կարգավորման կառուցվածքները և ճանապարհային նշանները, ջրահեռացման համակարգերը գտնվում են ոչ բավարար վիճակում, մասնավորապես համայնքային ճանապարհները առնվազն վերջին 30 տարիների ընթացքում չենթարկվելով անհրաժեշտ տեսակի և ծավալի նորոգման, բաց են թողել նորմատիվային նորոգման ժամկետները, որի արդյունքում ճանապարհների մոտ 70%-ը դարձել են անանցանելի և կարիք ունեն հիմնանորոգման և փոսային ընթացիկ նորոգումները տնտեսապես արդարացված չեն:
Համայնքի բնակելի 107, 108, 109 և 110 թաղամասերում ամբողջովին բացակայում են ասֆալտապատ փողոցները, որը իր հերթին դժվարացնում է քաղաքացիների ազատ տեղաշարժը, հասարակական տրանսպորտի ապահովվածությանը և երթուղիների տրամադրման մրցույթների անցկացմանը:
Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում վերջին 3-4 տարիների ընթացքում անցկացվել է 32 կմ երկարությամբ էլեկտրախնայող լուսատուներով լուսավորության ցանց, սակայն գիշերային լուսավորության համակարգը ամբողջովին չէ, համակարգը չի ընդգրկում քաղաքի և խոշորորցումից հետո արդեն համայնքի ամբողջ տարածքը:

Շարունակում են մեծ մնալ խնդիրները՝ պայմանավորված ճանապարհային անվտանգ երթևեկության կազմակերպման գործում, կապված համայնքի երթևեկության սխեմայի բացակայության, այդ սխեմայի ճանապարհային նշաններով և լուսացույցային սարքավորումներով ապահովման, գծանշման բացակայության հետ, չնայած որ համայնքում վերջին տարիների ընթացքում կատարվել են շատ աշխատանքներ:
Անմխիթար վիճակում է գտնվում անձրևատար ջրահեռացման համակարգը, որը հիմնականում իրականացվում է բաց եղանակով՝ կողային առուներով:

Փակ դրենաժային համակարգով իրականացվում է միայն Արմավիր քաղաքի Երևանյան փողոցի ջրահեռացումը: Անձրևների ժամանակ չկազմակերպված ջրահեռացումը հիմնականում խնդիրներ է առաջացնում բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներում բարձրացնելով աղետների ռիսկայնությունը:
Նախադպրոցական կրթության կազմակերպման բնագավառում գոյություն ունեցող խնդիրները հիմնականում պայմանավորված են շենքերի ոչ բավարար վիճակով, ջեռուցման համակարգերի բացակայությամբ, անհրաժեշտ գույքի բացակայությամբ, մաշվածությամբ:
Մշակույթի բնագավառի խնդիրների շարքում անհրաժեշտ է նշել Արվեստի և Երաժշտական դպրոցներում հասանելիության խթանման համապարփակ ծրագրերի բացակայությունը, համայնքային գրադարանների անբավարար վիճակը, որոնք համալրված չեն արդիական գրքային ֆոնդով, համապատասխան գույքով և տարածքներով, բացակայում է ջեռուցումը:
Սոցիալական պաշտպանության բնագավառում խնդիրները կապված են հիմնականում սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների հայտնաբերման լիարժեք մեխանիզմների և գործընթացների բացակայության կամ մասամբ լինելու, այդ մարդկանց և ընտանիքներին սոցիալական կարիքների բավարարման մեխանիզմների և նպատակայնության հետ:
Սոցիալական պաշտպանության բնագավառում աշխատանքների ցածր արդյունավետությունը պայմանավորված է կիրառվող մեխանիզմների ոչ լիարժեք լինելու և համայնքում սոցիալական աշխատողի ինստիտուտի թույլ զարգացվածությամբ:
Համայնքում առկա են համայնքային սեփականություն համարվող կիսակառույց բազմաբնակարան շենքեր, որոնք չենթարկվելով կոնսերվացման միջոցառումների ունեն վթարային տարբեր աստիճաններ: Առկա են նաև կոոպերատիվների սեփականություն հանդիսացող բազմաբնակարանային շենքեր, որոնք գտնվում են նույն կարգավիճակում:
Համայնքում անհատական բնակելի շինարարությանը խոչընդոտում են կոմունալ ենթակառուցվածքների բացակայությունը կամ անբավարար վիճակը և հիփոթեքային վարկավորման բնագավառի անհասանելիությունը:
Կոմունալ տնտեսության, բարեկարգման, կանաչապատման, սանիտարական մաքրման, գերեզմանատների պահպանման և շահագործման բնագավառում առկա են մի շարք խնդիրներ և խոչընդոտներ՝ մասնավորապես կանաչապատ տարածքների պահպանման և ընդլայնման համար խոչընդոտներ են հանդիսանում ոռոգման բաց և փակ համակարգերի բացակայությունը, աղբահանությունը իրականացվում է աղբարկղներից աղբատար մեքենաներով և շրջիկ մեքենաներով, որոնք գտնվում են տեխնիկապես և բարոյապես մաշված վիճակում, սանիտարական մաքրումը իրականացվում է բացառապես ձեռքի աշխատանքի միջոցով և քաղաքի տարածքի շատ փոքր հատվածում, գերեզմանատունը մասնակի է ցանկապատված, ներքին ճանապարհները անմխիթար վիճակում են, մեծ մասում բացակայում են ոռոգման ջրագծերը:
Աղետների ռիսկի նվազեցման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղպաշտպանության միջոցառումների իրականացման ոլորտներում խնդիրները պայմանավորված են հակաճառագայթային թաքստոցների, ապաստարանների բացակայությամբ, դրանց ոչ բարվոք կահավորվածությամբ, պաշտպանական միջոցների

բացակայությամբ, անհրաժեշտ վթարավերականգնողական տեխնիկաների բացակայությամբ կամ ոչ սարքին վիճակով:
Արմավիր համայնքը գտնվում է ՀԱԷԿ 5 կմ գոնայում, որը պահանջում է լրացուցիչ հավելյալ միջոցների անհրաժեշտություն:
Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում խնդիրները պայմանավորված են հանրային կանաչ և ջրային տարածքների սակավությամբ, բակային տարածքներում խաղահրապարակների և մարզասարքների բացակայությամբ, քաղաքի տարածքում ձևավորված աղբավայրերով և դրանց վերահսկման մեխանիզմների բացակայությամբ:
Ոռոգման համակարգերի, ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակ:
Գյուղատնտեսական ապահովագրության ոչ բավարար ներդրման աստիճան:

2.6 Համայքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

| Համայնքի ուժեղ կողմեր | Համայնքի թույլ կողմեր |
|---|---|
| ✓ Մարզկենտրոն<br>✓ Մայրաքաղաք Երեւանին մոտ գտնվելը (44 կմ)<br>✓ Կենդանաբուսաբանական այգի<br>✓ 14 մսուր մանկապարտեզ<br>✓ Մշակույթի օբյեկտների՝ սպորտդպրոցների, երաժշտական եւ արվեստի դպրոցների առկայություն<br>✓ Միջին մասնագիտական, արհեստագործական 4 քոլեջ<br>✓ 1 մարզային եւ 4 համայնքային գրադարան<br>✓ Երեւանին մոտ գտնվելը՝ ավելի մեծ թվով երտասարդների համար հասանելի է բարձրագույն կրթություն ստանալը<br>✓ Միջազգային ստանդարտներին համապատասխան մարզադաշտի առկայություն<br>✓ Բժշկական ծառայությունների առկայություն՝ հիվանդանոց, պոլիկլինիկա, Շտապ Օգնություն, ARMED բժշկական կենտրոն, ախտորաշման կենտրոն, ստոմատոլոգիական կլինիկաներ<br>✓ Լուսավորության ցանցի լայն առկայություն ևներգախնայող լուսատուներով<br>✓ Գլխավոր փողոցները ասֆալտապատված են<br>✓ Արտադրական 5 գործարանների առկայություն<br>✓ Հյուրանոցի առկայություն<br>✓ Երեւան-Արմավիր-Գյումրի միջպետական մայրուղի<br>✓ Երեւան-Արմավիր-Թբիլիսի երկաթուղի<br>✓ Համայնքում՝ մասնավորապես գյուղական բնակավայրերում, բավականին մեծ կտորներով հողատարածքների մշակում, գյուղատնտեսական ապրանքների արտադրություն<br>✓ Գյուղմթերքի արտահանում | ✓ Կոմունալ ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակ՝ արտաքին լուսավորության ցանց, ճանապարհների բարեկարգում, ոռոգման համակարգի ոչ բարվոք վիճակ<br>✓ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային, գույքային ջեռուցման համակարգի ոչ բավարար վիճակ<br>✓ Համայնքում գոյացած աղբի վերամշակման բացակայություն<br>✓ 14մսուր մանկապարտեզից միայն 4-ն են աշխատում ամբողջ տարին<br>✓ Երբեմնի արտադրական քաղաք՝ 25 գործարանից, այսօր գործում են 5-ը<br>✓ Երեւանին մոտ գտնվելը (ճոճանակային միգրացիա՝ ուսանողներ, աշխատուժ)<br>✓ Ներքաղաքային տրանսպորտի աշխատանքի ինտենսիվության անկում՝COVID-19ից հետո<br>✓ Պարբերաբար հոսանքի անջատումներ<br>✓ Հաշմանդամություն ունեցող անձանց համար անմատչելի փողոցներ<br>✓ Ցածր վարձատրվող աշխատատեղեր<br>✓ Տուրիստական ենթակառուցվածքների բացակայությունը՝ հյուրատների, հյուրանոցների ծառայության սպասարկման ցածր մակարդակ կամ բացակայություն<br>✓ Բնակչության դանդաղ աճ, ծնելիության ցածր մակարդակ<br>✓ Թափառող շներ<br>✓ Աղետների ռիսկերին դիմագրավելու կարողության ցածր մակարդակ, ապաստարանների բացակայություն |
| **Հնարավորություններ** | **Սպառնալիքներ** |
| ✓ Խոշորացված համայնքի կենտրոն<br>✓ Բիզնես-ՔՀԿ ներդրումներ<br>✓ Կանաչապատ տարածքների ընդլայնման | ✓ ՀԱԷԿ-ին մոտ գտնվելը<br>✓ Մոլիբդենի գործարան, թունավոր նյութերի արտամղում |

| | |
|---|---|
| հնարավորություն,<br>✓ Տասներկուամսյա մանկապարտեզների գործարկում<br>✓ Դոնոր կազմակերպություններ, նոր ներդրումներ<br>✓ Կենդանաբուսաբանական այգու ճանաչելիություն<br>✓ Տուրիզմի զարգացում<br>✓ Նոր արտադրական գործարաններ՝ զբաղվածության ապահովում<br>✓ Տրանսպորտային ցանցի վերականգնում<br>✓ Տուրիստական ենթակառուցվածքների զարգացում, ընդլայնում<br>✓ Մատչելի անցումների ապահովում, հենաշարժողական խնդիր ունեցող անձանց համար | ✓ Մարզային քաղաք-Երեւան միգրացիա<br>✓ Բարձր վարձատրվող աշխատատեղերի պակասը հանգեցնում են արտագաղթի<br>✓ Բնակչության դանդաղ աճ, ծնելիության ցածր մակարդակ<br>✓ Գարնանային ցրտահարությունը և կարկտահարությունը<br>✓ Ոռոգման ջրի մատակարարումը |

**3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում առաջիկա 5 տարիների համար**

**3.1 Համայնքի զարգացման տեսլական (2021-2026 թթ պլանավորած միջոցառումներ համայնքի բոլոր բնակավայրերի զարգացման համար)**

| Միջոցառման անվանում | Նպատակ/Ցուցանիշ |
|---|---|
| Ոռոգման համակարգի արդիականացում | Գյուղատնտեսությանը աջակցություն, բնակիչների ֆինանսական վիճակի կայունացում |
| Կաթիլային համակարգի ներդրմանը խթանում | Գյուղատնտեսությանը աջակցություն, բնակիչների ֆինանսական վիճակի կայունացում |
| Գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում | Ենթակլառուցվածքների վիճակի բարելավում, բարեկարգ կենցաղի ապահովում |
| Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում | Էլ. Էներգիայի խնայում, բարեկարգ կենցաղի ապահովում |

| | |
|---|---|
| Նախադպրոցական հիմնարկների հիմնանորոգում, գազաֆիկացում, ջեռուցման համակարգի կառուցում, կահավորում | Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող սաների համար բարեկեցիկ և միջավայրի ստեղծում: |
| Բժշկական ամբուլատորիաների հիմնանորոգում, գազաֆիկացում, ջեռուցման համակարգի կառուցում | Թիրախային խմբի համար նպաստավոր և բարեկարգ պայմանների ստեղծում |
| Համայնք-մասնավոր հատված համագործակցության աջակցում | Նոր ծրագրերի ու գաղափարների իրագործում, աշխատատեղերի ստեղծում |
| Բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների բարեկարգում, խաղահրապարակների կառուցում, բաժնային սեփականություն համարվող գույքի նորոգում և պահպանություն: | Բնակիչների համար բարեկարգ միջավայրի ապահովում |
| Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի ջրամատակարարման համակարգի ամբողջական վերակառուցում, նոր ջրահեռացման համակարգերի կառուցում: | Բնակիչների համար բարեկարգ կենցաղային միջավայրի ապահովում |
| Ներհամայնքային միասնական նոր երթուղիների ցանցի կազմակերպում և մրցութային կարգով երթուղիների տրամադրում: | Բնակիչների համար բարեկարգ կենցաղային միջավայրի ապահովում |
| Ներհամայնքային ճանապարհային ցանցի նորոգում, կահավորում և պահպանություն | Անվտանգության կանոնների պահպանություն, համայնքի բարեկարգ վիճակի ապահովում: |

### 3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները.

1.Արմավիրի տարածքային համաչափ և կայուն զարգացման ապահովում

2.Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի կենտրոնի բեռնաթափման նպատակով ճանապարհների նորոգման և անհատական բնակելի թաղամասերը կենտրոններին կապող ճանապարհների ասֆալտապատման ծրագրերի իրականացում

3.Համայնքի փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգխնայող համակարգերի ներդրում և հուսալիության բարձրացում

4.Համայնքի աղբավայրի կառավարման, թափոնների տեղադրման և մեկուսացման աշխատանքների իրականացում

5.Շենքերի բակային տարածքների բարեկարգում

6.Բնակելի շենքերի տանիքների պահպանություն և հիմնանորոգման ծրագրերի իրականացում

7.Բնակելի ֆոնդի վթարայնության հետազոտման աշխատանքների իրականացում և բնակիչների անվտանգության ապահովման ծրագրերի իրականացում

8. Հանգստի գոտիների ստեղծում, բարեկարգում և կանաչապատման իրականացում
9. Անհատական բնակելի թաղամասերի և գյուղական բնակավայրերի ենթակառուցվածքների ստեղծում, զարգացում:
10.Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում
11.Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային, առողջապահական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում
12.Բնակիչների սոցիալական պաշտպանության ապահովում և այս նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված ծրագրերի իրագործում:
13.Բնակչության անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովում
14.Կառավարման համակարգի բարեփոխումների և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովում և բնակչի հետ հետադարձ կապի ակտիվացում
15.Համայնքապետարանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում
16.Քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացում, լավագույն փորձի ուսումնասիրում և կիրառում:

**Զարգացման ոլորտային ծրագրեր**

*Քաղաքաշինություն և ճարտարապետություն*

Համայնքի զարգացման դիմագիծն ու այցեքարտը քաղաքաշինությունն է: Քաղաքաշինական ծրագրերն են, որ ձևավորում են բարեկարգ միջավայր և փոխում մարդկանց առօրյա կյանքն ու ապրելակերպը: Քաղաքաշինական ծրագրերի իրականացման հիմքում լինելու է քաղաքի գլխավոր հատակագծում և գյուղական բնակավայրերի քաղաքաշինական փաստաթղթերում ամրագրված հիմնական դրույթները:

Նկարագրություն

1. Համայնքային նշանակության ճանապարհափողոցային ցանցի ընդլայնում, վերանորոգում, հիմնանորոգում, դրանց երկայնքով անցնող ժամանակակից էներգախնայող լուսավորության համակարգերի կառուցում, գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացում:
2. Բնակելի ֆոնդի վթարայնության հետազոտական աշխատանքների իրականացում և ուժեղացման աշխատանքների ծրագրերի կազմակերպում:
3. Նոր այգիների և հանգստի գոտիների հիմնադրում, զբոսայգիների և կանաչ տարածքների վերականգնում:
4. Քաղաքաշինական միջավայրում հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովմանն ուղղված նախագծերի մշակում և հետևողականորեն դրանց իրականացում:

**2.Ջրային կառույցների կառուցում, շահագործում և պահպանում**

Ծրագրի նպատակը

Արմավիր համայնքի արտաքին տեսքի բարելավում, հանգստի գոտիներում զովության պահպանում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է Արմավիր քաղաքի կենտրոնական հրապարակի շատրվանների վերակառուցման ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ, նոր շատրվանի կառուցում Արցախյան ազատամարտում զոհված և անհետ կորած ազատամարտիկների հուշարձանի մերձակա տարածքում: Կիրականացվի նաև ցայտաղբյուրների կառուցում:

**3.Արմավիր համայնքի փողոցներում աղբամանների հարմարեցված հարթակների կառուցում**

Ծրագրի նպատակ

Փողոցների պատշաճ վիճակի, աղբահանության ծառայության մատուցման, բնակչության և փողոցային երթևեկության անվտանգության ապահովում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է քաղաքի փողոցների մայթերին տեղադրված աղբարկղների թվի ավելացում, ինչպես նաև աղբամանների տեղադրման համար հարմարեցված հարթակների կառուցում:

**4.Անշարժ գույքի կառավարում**

Արմավիր համայնքի վարչական տարածքը 2022 թվականի դրությամբ կազմում է 14950,3 հա Համայնքի տարածքում գտնվող շենքերի ու շինությունների կառավարման գործընթացը ներառում է դեպքեր , երբ դրանք իրենց գործառական նշանակությամբ չեն օգտագործվում, ինչը ունի հստակեցման կարիք: Նշվածը հնարավորություն կտա գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ գույքահարկի և / կամ վարձավճարի չափերը` համապատասխանեցնելով գույքի փաստացի օգտագործման նշանակությանը:

Արմավիր քաղաքում առկա են խորհրդային ժամանակներից քաղաքացիների կողմից զբաղեցրած, սակայն մինչև օրս չմասնավորեցված բնակարաններ: Առկա են համայնքի սեփականությունը համարվող գույքեր, որոնք դեռ չունեն իրավունքների պետական գրանցում: Առկա են դեպքեր, երբ հողամասերի գործառական և / կամ նպատակային նշանակությունները չեն համապատասխանում գործող օրենսդրությանը և ունեն հստակեցման կարիք:

1. Շենքերի և շինությունների կառավարում

Ծրագրի նպատակ`

Ծրագրի նպատակն է իրականացնել համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների արդյունավետ կառավարում:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

1. Համայնքի սեփականություն համարվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների կազմակերպում:
2. Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առանց համապատասխան պայմանագրերի համայնքային սեփականություն համարվող գույքերի օգտագործման դեպքերի հայտնաբերում և համապատասխան ձևակերպումների իրականացում:
3. Համայնքի սեփականություն համարվող գույքի կողմից բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող, լրացուցիչ չհիմնավորված ծախսեր պահանջող, ինչպես նաև ոչ լիարժեք մասնակի շահագործվող գույքի մասնավորեցման գործընթացի իրականացում:
4. Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող շենքերի և շինությունների գործառական նշանակությունների համապատասխանեցում փաստացի օգտագործմանը:
5. Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների կառավարման ամենամյա ծրագրերի մշակում:

**Հողերի հետ կապված հարաբերությունների կառավարում**

Ծրագրի նպատակը՝

Ծրագրի նպատակն է կարգավորել հողերի հետ հարաբերությունները:

Ծրագրի համառոտ նկարագրությունը՝

Ծրագիրը ներառում է՝

1. Իրավունքներ չձևակերպված, սակայն նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման գույքագրման , դրանց նկատմամբ իրավունքների վերականգնման և ձևակերպման գործառույթ:
2. Համայնքի տարածքում տնամերձ բնակշինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում:
3. Նախկինում կնքված հողամասերի, շինությունների վարձակալության պայմանագրերի ժամկետների և դրույքաչափերի վերանայում և վարձավճարների համապատասխանեցում ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան:
4. Համապատասխան իրավական ակտերի միջոցով նախատեսվում է հողամասերի գործառնական և նպատակային նշանակությունները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին:
5. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա ծրագրերի մշակում:

**Առևտուր և սպասարկում**

Արմավիր համայնքում գործում են առևտրի 370 օբյեկտ, սպառողական ապրանքների 76, գյուղատնտեսական արտադրանքի 100, գյուղմթերքի 2 շուկաներ, առևտրի կենտրոն 4, հանրային սննդի 30, կենցաղային ծառայություններ մատուցող 40 օբյեկտներ:

Չնայած քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի արգելմանը՝ դեռևս այն կանոնակարգման կարիք ունի:

Անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի,սպասարկման ծառայություններ մատուցող օբյեկտները:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. Առևտրի և սպասարկումների մասին ՀՀ օրենքով, ՏԻՄ օրենքով, համայնքին վերապահված լիազորություններին համակարգված և հետևողական իրականացում:
2. Օրենսդրության համապատասխան բացօթյա առևտրի պատշաճ կազմակերպում և ապօրինի առևտրի արգելում և կանխարգելում:
3. Համայնքի փողոցներին տեղակայված կրպակների, տաղավարների և շինանյութի վաճառքի կետերի արդիականացում, առևտրի կանոնների պահանջներին համապատասխանեցում:
4. Առևտրի օբյեկտներից դուրս ապրանքների ցուցադրումն արգելելու ուղղությամբ հսկողության խստացման անհրաժեշտություն:
5. Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում:
6. Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում
Ծրագրի նպատակը՝
Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն

7. Արմավիր քաղաքում չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժում, ինչպես նաև առևտրի , առանձին օբյեկտների ու շինանյութի վաճառքի կետերի արդիականացում:

Ծրագրի նպատակը՝
Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում առկա են թվով 137 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնք չեն կառավարվում համատիրությունների և լիազորագրային կառավարիչների կողմից: Առկա բոլոր խնդիրները, որոնք պահանջում են հրատապ լուծում կամ չեն լուծվում, կամ լուծվում են մասամբ քաղաքապետարանի սուղ հնարավորության սահմաններում և աջակցությամբ:

Ոլորտում առկա խնդիրների կարգավորման նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված <<բազմաբնակարան շենքերի կառավարման մասին >> ՀՀ օրենքի նոր նախագծի պահանջներով:

Հիմնախնդիրներ՝

1. Թեք տանիքների հիմնանորոգում
2. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ստեղծում
3. Աղբավայրի կառավարման անհրաժեշտություն, գոյություն ունեցող աղբի կոնսերվացում:

Կոշտ թափոնների կառավարում՝

Արմավիր համայնքի աղբահանության և սանմաքրման աշխատանքները իրականացվում են <<ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ >> տնօրինության կողմից :
Մշակվել են աղբահանության և սանիտարական մաքրման սխեմաները:
Պարբերաբար նորացվում և ձեռք են բերվում անհրաժեշտ քանակի աղբարկղներ:

Նախատեսվող ծրագրեր

1. Օգտագործելով օրենսդրական փոփոխությունների ընձեռած հնարավորությունները՝ ստեղծել նոր մոդելի համատիրություններ, որոնք հնարավորություն կտան համայնքի մասնակցային ներդրումային ծրագրերի միջոցով իրականացնել տարիներ շարունակ բազմաբնակարան շենքերում կուտակված պրոբլեմների փուլային լուծումը:
2. Ապահովել աղբահանության և սանմաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավումը:
3. 3.Ավելացնել հանրային տարածքների զուգարանների թիվը:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ապահովության բնագավառում Արմավիրի համայնքապետարանի ռազմավարությունը ուղղված է լինելու քաղաքացիների սոցիալական բարձր ռիսակայնության խմբերի սոցիալական պաշտպանությանը, սոցիալական ռիսկի աստիճանական կրճատմանը , հատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, հավասար պայմանների ապահովմանը, տարեցների տեղահանվածների, անօթևանների, ազատազրկման վայրերից, ազատվածների իրավունքների պաշտպանությանը:

**1.Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն**

Ծրագրի նպատակը՝

Աջակցել կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքներին, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, բազմազավակ ընտանիքներին, պատերազմի վետերաններին, աղքատ ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, տարեցներին, հաշմանդամներին, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և անօթևան անձանց:

**2. Հասարակական կազմակերպություններին աջակցություն**

Ծրագրի նպատակը՝

Նպատակն է սոցիալական ծրագրերի իրականացման ընթացքում ոչ պետական և առևտրային կազմակերպությունների մասնակցության ձևերի ընդլայնումը:
Հասարակության մեջ հաշմանդամների լիարժեք ինտեգրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

**3.Սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով հաշվառման իրականացում, անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորում**

Ծրագրի նպատակ ՝

Ծրագրի արդյունքում նախատեսվում է կարիքավոր ընտանիքների բնակարանային խնդիրների աստիճանական կարգավորում:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

ՀՀ կառավարության 10.09.2015թ. թիվ 1069-Ն որոշմամբ սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված բնակելի տարածության կարիք ունեցող անձանց հաշվառման աշխատանքների իրականացում: Քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց սոցիալական աջակցության և սոցիալական ներառման խնդիրների կազմակերպում:

**4.Սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում**

Ծրագրի նպատակ ՝

Ծրագրի նպատակն է կազմակերպել սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգիստը:

Ծրագրի համառոտ նկարագրություն `
Սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաների ամառային հանգիստի կազմակերպումը մանկական ճամբարներում: Ծրագիրն ուղղված է զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը:

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

### 1.Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում

Ծրագրի նպատակ`

Արտադպրոցական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի սերմանում, Հայաստանի հավաքական թիմերի համալրում բարձրակարգ մարզիկներով:

Ծրագրի համառոտ նկարագրություն`

Ծրագրի շրջանակում նախապատրաստվում է առողջ ապրելակերպի արմատավորում ու ֆիզիկական դաստիարակության ապահովում, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ սերնդի դաստիարակում, մարզական ընդունակությունների կատարելագործում, մարզիկ մարզուհիների նախապատրաստում համապատասխան ԲՈՒՀ-երում ուսումը շարունակելու, Հայաստանի հավաքական թիմերի համար բարձրակարգ մարզիկների նախապատրաստում, ֆիզիկական-առողջարարական միջոցառումներին օժանդակում:

### Սպորտային միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակ`

Առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկական զարգացման իրականացում, տարբեր մարզաձևերի մասսայականացում և զարգացում, ուժեղագույն թիմերի և մարզիկների ի հայտ բերում:

Ծրագրի նկարագրություն`

Արմավիր համայնքի առաջնությունների կազմակերպում
ՀՀ առաջնություններին, տեղական և միջազգային մրցաշարերին թիմերի մասնակցության ապահովում, ուսումնամարզական հավաքների մասնակցություն` հանրապետական և միջազգային , Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկների խրախուսում:

### 3.Արտադպրոցական կազմակերպությունների շենքերի վերանորոգում, գույքի ձեռքբերում

Ծրագրի նպատակ `

Մարզական կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում, գործունեության արդյունավետության բարձրացում:

## Ծրագրի համառոտ նկարագրություն`

Ծրագրով նախատեսվում է համայնքի ենթակայության մարզական կազմակերպությունների շենքերի վերանորոգման և մարզագույքով ապահովման աշխատանքների իրականացում:

**4.Հաշմանդամություն ունեցող անձանց համար սպորտային միջոցառումների կազմակերպում**

Ծրագրի նպատակ`

Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրում հասարակական կյանքին:

Ծրագրի համառոտ նկարագրություն `

Մշակել և իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային միջավայր ներառելու պայմանների ապահովման հայեցակարգ:
Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզական միջոցառումների, սպարտակիադաների մասնակցության ապահովումը:

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվում է ապահովել համայնքի երեխաների բարեկեցիկ միջավայրում կրթվելու հնարավորությունը` վերանորոգելով և կահավորելով նախադպրոցական ուսումնական հաստատությունները:

## ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթի ոլորտում նախատեսվող և իրականացվող ծրագրերի նպատակն է բարձրացնել մշակույթի դերը, պահպանել և տարածել ազգային մշակութային ժառանգությունը, խթանել անհատի, և հասարակության ստեղծագործական ներուժը, ապահովել ազգային մշակութային ավանդական ձևերի պահպանումը և զարգացումը:

## Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Իրականացնել ազգային, պետական, հոգևոր տոներին ու հիշարժան տարեթվերին նվիրված գրքային և մշակութային-թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ: Ավանդական դարձած գրադարանավարի օրվան նվիրված <<Հանդիպման վայրը գրադարան>> միջոցառումը կազմակերպվում է յուրաքանչյուր տարի:

Հիմնախնդիրներ՝

1. Տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինում և համալրում
2.Գրականության համալրում
3. Գրադարանային գույքի համալրում
4. Շենքային պայմանների բարելավում

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ և ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐ

Նախատեսվում է երաժշտական և Արվեստի դպրոցների սաների համերգների, հանրապետական և միջազգային մրցույթների մասնակցություն:

Հիմնախնդիրներ՝

1. Երաժշտական և Արվեստի դպրոցների անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով համալրում և շենքային պայմանների բարելավում:
2. Հաշմանդամություն ունեցող և ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության մեծացման նպատակով կրթական և սոցիալական ծրագրերի իրականացում:
3. Լավագույն սաների բացահայտում, հանրապետական և միջազգային հարթակներում ներկայանալու համար նպաստավոր պայմանների ստեղծում:

### Արտադպրոցական դաստիարակության ծրագիր(երաժշտական և արվեստի դպրոցներ)

Ծրագրի նպատակը՝

Իրականացնել մշակութային նախնական մասնագիտական կրթություն, արտադպրոցական գեղարվեստական դաստիարակություն, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, տաղանդավոր երեխաների համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Նախատեսվում է երաժշտական և արվեստի դպրոցներում երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության արտադպրոցական գեղարվեստական դաստիարակության ուսուցման

իրականացում: Նախատեսվում է ապահովել արտադպրոցական կազմակերպությունների շենքերի վերանորոգման շարունակականությունը:

**Մշակութային միջոցառումների կազմակերպում**

Ծրագրի նպատակը՝

Արմավիր համայնքի բնակչության լայն զանգվածների ընդգրկումը պետական ազգային և այլ միջոցառումների, ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Արմավիր համայնքում պետական ազգային և այլ մասսայական միջոցառումների կազմակերպում և անցկացում: Միջոցառումներ նվիրված հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին:

**Աղետների ռիսկի կառավարում**

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը կարգավորվում է «Քաղ. պաշտպանության մասին » ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության մի շարք որոշումների պահանջներին համապատասխան. համայնքի ղեկավարի որոշումներով կազմվել են բնակչության տարհանման պլանները:

Համայնքը գտնվում է ՀԱԷԿ-ի 5 կմ զոնայում, այդ պատճառով պարբերաբար իրականացվում են աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ուսումնավարժություններ և համագործակցում ենք այդ ոլորտի մարմինների հետ:

Արմավիր համայնքի մասը կազմող գյուղական բնակավայրերում մեծ է ռիսկը կարկտահարության. կարկտակայանները սպասարկվում են համայնքապետարանի կողմից:

**ՀՀԶԾ ֆինանսավորումը**

ՀՀԶԾ-ում ընդգրկված 2022-2023թթ համար նախատեսված բոլոր այն ծրագրերը որոնց ֆինանսավորողը համայնքն է կամ համաֆինանսավորողն է համայնքը՝ կան առկա համապատասխան միջոցներ:

Իսկ առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսված ծրագրերի համար նախատեսվում է բյուջեում ունենալ համապատասխան միջոցներ:

Իսկ մնացած բոլոր դեպքերում ֆինանսավորման աղբյուրը կամ պետական բյուջեն է կամ դոնոր կազմակերպությունը:

**ՀՀԶԾ մոնիթորինգը**

ՀՀԶԾ-ի իրականացումը, ինչպես նաև մոնիթորինը կատարվելու է համայնքի ղեկավարի հսկողությամբ և պատասխանատվությամբ բոլոր 5 տարիների ընթացքում: Աշխատանքներին մասնակցելու են համայնքապետարանի աշխատակազմը, ավագանին, ինչպես նաև համակժնքի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ իրեց հարցումներով, իրականացված մոնիթորինգով և գնահատումով:

Համայնքային գույքի կառավարման հնգամյա (**2021-2026թթ.**) ծրագիրը

Աղյուսակ 4. Համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման Ծրագիրը

| Հ/հ | Գույքի անվանումը | Հասցեն կամ ծածկագիրը | Զբաղեցրած տարածքը/ մակերեսը (մ2) | Վիճակի գնահատումը | Գույքի կառավարման գործառույթը | Այլ բնութագրիչներ |
|---|---|---|---|---|---|---|
| Արմավիր քաղաք | | | | | | |
| 1 | Արմավիրի քաղաքապետարան | Հանրապետության 32 | 1456.8 | լավ | Համայնքի սեփականություն | |
| 2 | Թիվ 1 մանկապարտեզ | Հ Ավետիսյան 2/2 | 2000.0 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1970թ |
| 3 | Թիվ 2 մանկապարտեզ | Ջիվանու 40 | 1248.3 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1983թ |
| 4 | Թիվ 3 մանկապարտեզ | Դարմոյան փող թիվ 8 | 720.4 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1958թ |
| 5 | Թիվ 4 մանկապարտեզ | Մաշտոցի 59 | 1877.0 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1971թ |
| 6 | Թիվ 5 մանկապարտեզ | Արարատյան 5/7 | 1727.4 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1971թ |
| 7 | Թիվ 6 մանկապարտեզ | Սայաթ-Նովա փող թիվ 10ա, 10/2 | 2423.6 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1980թ |
| 8 | Թիվ 7 մանկապարտեզ | Հանրապետության 1 նրբ 9/1 | 660.4 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1975թ |
| 9 | Թիվ 8 մանկապարտեզ | Չարենցի 26 | 1251.3 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1964թ |
| 10 | Թիվ 9 մանկապարտեզ | Արարատյան 1 | 1609.4 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1983թ |
| 11 | Թիվ 10 մանկապարտեզ | Շահումյան 29 | 609.3 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1964թ |
| 12 | Թիվ 11 մանկապարտեզ | Կոմիտասի 31 | 1722.6 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1978թ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | Թիվ 12 մանկապարտեզ | Բաղրամյան 9 | 1832.1 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1980թ |
| 14 | Գիշերօթիկ դպրոցի շենք | Գորկու 5 նրբ թիվ 14 | 1788.4 | լավ | Համայնքի սեփականություն | - |
| 15 | Նկուղ | Բաղրամյան 5 շենք | 74.8 | լավ | Համայնքի սեփականություն | |
| 16 | Արտադրական շենք շինություն | Շահումյան 3ա | 154.3 | բավ | Համայնքի սեփականություն | |
| 17 | Շինություն | Սայաթ-Նովա 1ա/1 | 33.9 | լավ | Համայնքի սեփականություն | |
| 18 | Շինություն | Երևանյան փող 42/1 | 72.7 | լավ | Համայնքի սեփականություն | |
| 19 | Արվեստի Դպրոց | Արարատյան 9 | 1557.9 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1979թ |
| 20 | Թիվ 1 մարզադպրոց | Չարենցի 8 | - | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1969թ |
| 21 | Թիվ 1 մշակույթի տուն | Ջիվանու 23 | 1087.2 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1950թ |
| 22 | Թիվ 2 մշակույթի տուն | Կոմիտաս 29 | 1789.1 | վատ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1967թ |
| 23 | Շախմատի դպրոց | Հանրապետության 18 | 567.1 | լավ | Համայնքի սեփականություն | |
| 24 | Ջրսայգի | Հանրապետության փող թիվ 2 | - | լավ | Համայնքի սեփականություն | - |
| 25 | Բարեկարգում տն. վարչ. շենք | Սայաթ-Նովա 109ա | 315.5 | բավ | Համայնքի սեփականություն | - |
| 26 | Աբովյան 137 / սոցապ. շենք / | Աբովյան 137 | 1552.7 | լավ | Համայնքի սեփականություն | - |
| 27 | Ըմբշամարտի դպրոցի շենք | Աբովյան 137 | 453.9 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1969թ |
| 28 | Ջրաբաշխիչ աշտարակ | Աբովյան 10/1 | 46.7 | բավ | Համայնքի սեփականություն | - |
| 29 | Ավտոտնակ | Ջիվանու 15 1 | 24 | | Համայնքի սեփականություն | - |
| 30 | Ավտոտնակ | Բաղրամյան 33 շ 1 | 25.2 | | Համայնքի սեփականություն | - |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 31 | Հանրակացարան | Սիլիկյան 3 | 1931.8 | | Համայնքի սեփականություն | - |
| 32 | Հանրակացարան | Սիլիկյան 3 | 1931.8 | | Համայնքի սեփականություն | - |
| 33 | Հանրակացարան | Սիլիկյան 3 | 1233.3 | | Համայնքի սեփականություն | - |
| 34 | Բնակարան | Սիլիկյան 3 շ 19/2 | 42.9 | | Համայնքի սեփականություն | - |
| 35 | Բնակարան | Սիլիկյան 3շ 20/1 | 43.4 | | Համայնքի սեփականություն | - |
| 36 | Հանրակացարան | 21 փող.թիվ 13 | 2454.3 | | Համայնքի սեփականություն | - |
| 37 | Հանրակացարան | 21 փող.թիվ 13 | 1957.7 | | Համայնքի սեփականություն | - |
| 38 | Հանրակացարան | 21 փող.թիվ 13 բն 20 | 38.4 | | Համայնքի սեփականություն | - |
| 39 | Հանրակացարան | 21 փող.թիվ 13 բն 7 | 37.6 | | Համայնքի սեփականություն | - |
| 40 | Հանրակացարան | 21 փող.թիվ 13 բն10 | 14 | | Համայնքի սեփականություն | - |
| 41 | Հանրակացարան | 21 փող.թիվ 13 բն 303 | 18.5 | | Համայնքի սեփականություն | - |
| 42 | Հանրակացարան | 21 փող.թիվ 13 բն 2 | 62.8 | | Համայնքի սեփականություն | - |
| 43 | Տաղավար | Երևանյան 26 | 15.84 | | Համայնքի սեփականություն | - |
| 44 | Ասֆալտապատ ճանապարհներ | Ք .Արմավիր | 547010քմ | բավ | Համայնքի սեփականություն | - |
| 45 | Ասֆալտապատ ճանապարհ Բաղրամյան փող | Բաղրամյան փող | 17360քմ | լավ | Համայնքի սեփականություն | - |
| 46 | Պոմպակայան ոռոգման | | | վատ | Համայնքի սեփականություն | - |
| 47 | Ասֆալտապատ ճանապարհներ | Ք .Արմավիր | 547010քմ | բավ | Համայնքի սեփականություն | - |
| 48 | Ասֆալտապատ ճանապարհ Բաղրամյան փող | Բաղրամյան փող | 17360քմ | լավ | Համայնքի սեփականություն | - |
| 49 | Պոմպակայան ոռոգման | | | վատ | Համայնքի սեփականություն | - |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 50 | Տրանսպորտային միջոց ZIL 237 LS 28 | | | վատ | Համայնքի սեփականություն | Անսարք է |
| 51 | Մարդատար մեքենա VAZ 21074 820 LL 11 | | | | Համայնքի սեփականություն | |
| 52 | Մարդատար մեքենա GAZ 3102 989 LL 11 | | | | Համայնքի սեփականություն | |
| 53 | Մարդատար մեքենա VAZ 21154 991 LL 70 | | | | Համայնքի սեփականություն | |
| 54 | Մարդատար մեքենա HYNDAI SONATA 21154 990LL 70 | | | | Համայնքի սեփականություն | |
| 55 | Ավտոաշտարակ GAZ 497AS61 | | | | Համայնքի սեփականություն | |
| 56 | Ավտոմեքենա GAZ 120 LS 28 | | | | Համայնքի սեփականություն | |
| 57 | Ավտոմեքենա GAZ 079 AU 61 | | | | Համայնքի սեփականություն | |
| 58 | Ավտոմեքենա GAZ 378 AT 61 | | | | Համայնքի սեփականություն | |
| 59 | Ավտոմեքենա KAMAZ 039 OF 61 | | | | Համայնքի սեփականություն | |
| 60 | Ավտոմեքենա GAZ 981 UL 28 | | | | Համայնքի սեփականություն | |
| 61 | Ավտոմեքենա ZIL 377 AT 61 | | | | Համայնքի սեփականություն | |
| 62 | Ավտոմեքենա ZIL 080 AU 61 | | | | Համայնքի սեփականություն | |
| 63 | Ավտոմեքենա ZIL 817 OT 61 | | | | Համայնքի սեփականություն | |
| 64 | Տրակտոր | | | | Համայնքի սեփականություն | 3 հատ |
| 65 | Ավտոգրեյդեր | | | | Համայնքի սեփականություն | Կանխատեսվող |
| 66 | Բազմաֆունկցիոնալ ջրցան | | | | Համայնքի սեփականություն | Կանխատեսվող |
| 67 | Աղբահավաք ինքնաթափ մեքենա 2 հատ | | | | Համայնքի սեփականություն | Կանխատեսվող |
| 68 | Բազմաֆունկցիոնալ էքսկավատոր | | | | Համայնքի սեփականություն | Կանխատեսվող |

| Լուկաշին գյուղ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լուկաշինի գյուղապետարան | 04-047-033-042<br>Հ. Ավետիսյան 38 | 0.0336 հա<br>294.6 մ/ք | լավ | համայնքի սեփականություն | 1974 |
| 2 | Ակումբի շենք | 04-047-034-026<br>Ա. Թամանյան 15 | 654.9 մ/ք | վատ | համայնքի սեփականություն | 1974 |
| 3 | Նոր տեխնիկումի շենք | 04-047-030-026-01<br>Հ. Ավետիսյան 2 նրբ. 3 շենք | 520 մ/ք | վատ | համայնքի սեփականություն | 1983 |
| 4 | Նոր տեխնիկումի ուսումնական մաս | 04-047-030-026-02<br>Հ. Ավետիսյան 2 նրբ. 1 շենք | 1890մ/ք | վատ | համայնքի սեփականություն | 1983 |
| 5 | Կացայատուն | 04-047-033-00<br>Գ. Նժդեհ 1/3 | 240մ/ք | վատ | համայնքի սեփականություն | 1951 |
| 6 | Բնակելի տներ | | | | համայնքի սեփականություն | 1948 |
| 7 | Մանկապարտեզի շենք | *04-047-03-001*<br>*Հ. Ավետիսյան 42* | 0.3851հա<br>604.7մ/ք | լավ | համայնքի սեփականություն | *1936* |
| 8 | Լողարան | 04-047-041-00 | 588մ/ք | վատ | համայնքի սեփականություն | 1955 |
| 9 | Ստադիոն | 04-047-041-00 | 0.8հա | բավ | համայնքի սեփականություն | 1955 |
| 10 | Փողոցների ասֆալտ | ԼՈՒԿԱՇԻՆ | 28700մ/ք | վատ | համայնքի սեփականություն | 1981 |
| 11 | Խորքային ջրհոր | | | վատ | համայնքի սեփականություն | 1980 |
| 12 | Գործող խորքային հոր | | 12 հատ | լավ | համայնքի սեփականություն | |
| 13 | Անավարտ խորքային հորեր | | 3 հատ | վատ | համայնքի սեփականություն | 1980 |
| 14 | Ջրի հին գիծ | | 18 կմ | վատ | համայնքի սեփականություն | 1981 |
| 15 | Լուկաշինի կիսանդրի | | 1հատ | լավ | համայնքի սեփականություն | 1975 |
| 16 | Հունան Ավետիսյանի կիսանդրի | | 1հատ | լավ | համայնքի սեփականություն | 1954 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 17 | Հուշահամալիր | | 1հատ | լավ | համայնքի սեփականություն | 1950 |
| 18 | Տաղավար –կանգառ | | 3 հատ | լավ | համայնքի սեփականություն | 2019 |
| 19 | Մետաղյա տաղավար | | 1հատ | լավ | համայնքի սեփականություն | 2018 |
| 20 | Ավտոմեքենա | MERCEDES-BENZ C-240 | 1 հատ | բավ | համայնքի սեփականություն | 2003 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Լենուղի գյուղ | | | | | | |
| 1 | Լենուղու համայնքապետարան | փողոց 3, շենք 18 | 320 | բավարար | համայնքային սեփականություն | 1976 թ. |
| 2 | Ակումբ | փողոց 3 , շենք 11 | 675 | վատ | համայնքային սեփականություն | 1933թ. |
| 3 | Առողջության կենտրոն | փողոց 6, շենք 37 | 602 | վատ | համայնքային սեփականություն | 1946թ. |
| 4 | Ճաշարանի շենք | փողոց 3, շենք 6 | 115 | վատ | համայնքային սեփականություն | 1962թ. |
| 5 | Փոստի շենք | փողոց 3, շենք 20 | 30 | վատ | համայնքային սեփականություն | 1949թ. |
| 6 | Խորքային հորեր | | 13հատ | վատ | համայնքային սեփականություն | 1958-1965 |
| 7 | Ասֆալտապատ ճանապարհ | | 8կմ | լավ | համայնքային սեփականություն | 2014թ. |
| 8 | Հանրակացարան | փողոց 4, շենք 1 | 380 | վթարային | համայնքային սեփականություն | 1942թ. |
| 9 | Հանրակացարան | փողոց 4, շենք 3 | 380 | վթարային | համայնքային սեփականություն | 1942թ. |
| 10 | Վարձակալական հողեր | | 117, 26 հա | | համայնքային սեփականություն | |
| 11 | Այլ հողեր | | 112,11 հա | | համայնքային սեփականություն | |
| Մյասնիկյան գյուղ | | | | | | |
| 1 | Վարչական շենք | Մյասնիկյան-4 | 711,67ք/մ | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1969թ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Գրասենյակի շենք | Մյասնիկյան-4 | 900ք/մ | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1967թ |
| 3 | Մշակույթի տուն | Մ.Մելքոնյան | 900ք/մ | Անբավար. | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1974թ |
| 4 | Մանկապարտեզի շենք | Մ.Մելքոնյան-62 | 730,6ք/մ | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1969թ , վերանորոգված |
| 5 | Գյուղ տեխնիկայի ծածկոց | Երևանյան | 100քմ | Բավ. | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1913թ |
| 6 | կաթսայատուն | | 250ք/մ | Անբավար. | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1960թ |
| 7 | կամուրջ | | 1հատ | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1968թ |
| 8 | զրուցարան | | 1 հատ | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2017թ |
| 9 | ավտոմեքենա | | 1 հատ | լավ | Համայնքի սեփականություն | Ձեռք է բերվել 2019 |
| 10 | Ասֆալտապատ ճանապարհներ | Մյասնիկյան փող | 2810ք/մ | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2020թ |
| 11 | Ասֆալտապատ ճանապարհներ | Մ.Մելքոնյան | 7416ք/մ | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2021թ |
| 12 | Լուսատու խաչ | | 1 հատ | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2018թ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | Սպասարահ | | 3 հատ | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2018թ |
| 14 | ,,Մյասնիկյան,,անվան վահանակ | | 1 հատ | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2018թ |
| 15 | Ցերեկային լույսեր | Երևանյան փողոց | 1500մ | լավ | Համայնքի սեփականություն | |
| 16 | Ցերեկային լույսեր | Մյասնիկյան փողոց | 300 | բավ | Համայնքի սեփականություն | |
| 17 | Ցերեկային լույսեր | Բաղրամյան փողոց | 660մ | բավ | Համայնքի սեփականություն | |
| 18 | Ցերեկային լույսեր | Աբովյան փողոց | 180մ | բավ | Համայնքի սեփականություն | |
| 19 | Ցերեկային լույսեր | Շիրազի փողոց | 510մ | բավ | Համայնքի սեփականություն | |
| 20 | Ցերեկային լույսեր | Խանջյան փողոց | 990 | բավ | Համայնքի սեփականություն | |
| 21 | Ցերեկային լույսեր | Գայի փողոց | 180 | բավ | Համայնքի սեփականություն | |
| 22 | Ցերեկային լույսեր | Իսահակյան փողոց | 60մ | բավ | Համայնքի սեփականություն | |
| 23 | Ցերեկային լույսեր | Բաբաջանյան | 480մ | բավ | Համայնքի սեփականություն | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 24 | Ցերեկային լույսեր | Սևակի փողոց | 240 | բավ | Համայնքի սեփականություն | - |
| 25 | Ցերեկային լույսեր | Թումանյան փողոց | 240մ | բավ | Համայնքի սեփականություն | - |
| 26 | Ցերեկային լույսեր | Ավետիսյան փողոց | 390մ | բավ | Համայնքի սեփականություն | - |
| 27 | Ցերեկային լույսեր | Գագարին փողոց | 570մ | բավ | Համայնքի սեփականություն | |
| 28 | Ցերեկային լույսեր | Իսակովի փողոց | 180մ | բավ | Համայնքի սեփականություն | - |
| 29 | Սանհանգույց/համայնքային նշանակության/ | | 5կմ | Անբավ. | Համայնքի սեփականություն | Կառուցված 1970 թ |
| 30 | գազիֆիկացում | Շիրազի-1,Երևանյան-7 ,Մյասնիկյան 2բազմաբնակարան շենքերի | 258մ | լավ | Համայնքի սեփականություն | Կավուցված է 2017թ |
| 31 | Ոռոգման ցանց | | 70կմ | բավ | Համայնքի սեփականություն | - |
| 32 | Խորքային հոր | Դպրոցի մոտ | 1 հատ | լավ | Համայնքի սեփականություն | Վերանորոգված է 2019թ |
| 33 | Խորքային հոր | | 12 հատ | | Համայնքի սեփականություն | Անհատույց հանձնված է ,,ՇԵՆԻԿ,,ՋՈՌ-ին 5 հատը չաշխատող |

| Արաքս գյուղ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արմավիր համայնք<br>Գ. Արաքսի գյուղապետարան | Գ. Արաքս . Գրիգորյան 2 | 3100.0 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1987թ |
| 2 | մանկապարտեզ | Գ. Արաքս , Ս. Գրիգորյան 26 | 2600 | վատ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1968թ |
| 3 | Ակումբի շենք | Գ. Արաքս , Ս. Գրիգորյան 7 | 500.0 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1954թ |
| 4 | Խմելու ջրի պոմպակայան | Գ.Արաքս | | բավ | Համայնքի սեփականություն | |
| 5 | Խմելու ջրի պոմպակայան | Գ.Արաքս | | բավ | Համայնքի սեփականություն | |
| 6 | Խմելու ջրի պոմպակայան | Գ.Արաքս | | բավ | Համայնքի սեփականություն | |
| 7 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի սեփականություն | |
| 8 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի սեփականություն | |
| 9 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի սեփականություն | |
| 10 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի սեփականություն | |
| 11 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի սեփականություն | |
| 12 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի սեփականություն | |
| 13 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի սեփականություն | |
| 14 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի սեփականություն | |
| 15 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի սեփականություն | - |
| 16 | Պոմպակայան ոռոգման | Գ.Արաքս | | վատ | Համայնքի | - |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | սեփականություն | |
| 17 | Վարձակալական հողեր | Գ.Արաքս | 22.54 հա | | | |
| Խանջյան գյուղ | | | | | | |
| 1 | Խանջյանի գյուղապետարան | 5-րդ փողոց,7-րդ շենք | | լավ | Համայնքի սեփականություն | 1964թ. |
| 2 | Մշակույթի տուն | 5-րդ փողոց,2-րդ շենք | 895,2քմ | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1977թ |
| 3 | Ջրոսայգի | 5-րդ փողոց, | 1,0 հա | լավ | Համայնքի սեփականություն | |
| 4 | Ամբուլատորիայի շենք | 1-ին փողոց, | 720.4 | անբավարար | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվը 1975թ. |
| 5 | Մանկապարտեզ/օժանդակ շինություններով/ | 5-րդ  փողոց,9  շենք | 845,2 քմ | չգործող | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1970թ |
| 6 | Մանկապարտեզի տարածք | 5-րդ փողոց, 9 տարածք | 0,513 հա | բավ | Համայնքի սեփականություն | |
| 7 | Վարձակալական հողեր | | 45,62 հա | բավ | Համայնքի սեփականություն | |
| 8 | Ջրաբաշխիչ աշտարակ | | | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվը 1970թ. |
| 9 | Խորքային հորեր | | 6 հատ | 2 չգործող | Համայնքի սեփականություն | Օգտագործման իրավունքով փոխանցվել է <<Արնավիր ՋՕԸ-ին |
| 10 | Ներտնտեսային ցանցի առուներ | | 25 կմ | անբավարար | Համայնքի սեփականություն | |
| 11 | գերեզմանոց | 13 փողոց | 3,1 հա | բավարար | Համայնքի սեփականություն | |
| 12 | Հասարակական տարածք | 5-րդ փողոց, 11 տարածք | 0,715 հա | բավարար | Համայնքի սեփականություն | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | Լուսավորության սյուն | | 53 հատ | լավ | Համայնքի սեփականություն | |
| Նորավան գյուղ | | | | | | |
| 1 | Նորավան գյուղի վարչական շենք | Գ□ Նորավան 5փ 29/1 | 148 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2005թ |
| 2 | Ջրսայգի խաղահրապարակով | Գ□ Նորավան 5փ 29/1 | 2750 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2020թ |
| 3 | Խորքային հորեր | Գ□ Նորավան | 5 հատ | բավ | Համայնքի սեփականություն | հանձնված է Արմավիր ՋՕԸ-ին անհատույց օգտագործման |
| 4 | Ասֆալտապատ ճանապարհ | Գ□ Նորավան | 8200 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2010թ |
| 5 | Ասֆալտապատ ճանապարհ | Գ□ Նորավան | 10000 | քայքայված | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2010թ |
| 6 | Վարձակալության տրված հողատարածք | Գ□ Նորավան | 22300 | բավ | Համայնքի սեփականություն | Հատկացված է 2018թ |
| 7 | Մանկապարտեզի կառուցման համար հատկացված հողատարածք | Գ□ Նորավան 1փ 11/3 | 7407 | բավ | Համայնքի սեփականություն | Հատկացված է 2021թ |
| 8 | Ծառայողական ավտոմեքենա | Գ□ Նորավան | | բավ | Համայնքի սեփականություն | Ձեռք է բերվել 2017թ -ին |

Մայիսյան գյուղ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մայիսյանիգյուղապետարան | 1-ին փողոց, թիվ 52 | 410 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցմանտարեթիվ 1938թ |
| 2 | Մանկապարտեզ | 1-ին փողոցթիվ 47 | 2961 | վատ | Համայնքի սեփականություն | Կառուցմանտարեթիվ 1968թ |
| 3 | Մշակույթիտուն | 1-ին փողոց, թիվ 53 | 7383 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցմանտարեթիվ 1968թ |
| 4 | Ճանապարհներ | ասֆալտապատ | 50.000 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցմանտարեթիվ |
| 5 | Պոմպակայանոռոգման | | | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցմանտարեթիվ 2002թ |
| 6 | Բուժամբուլատորիա | 1-ին փողոց, թիվ 45 | 380 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցմանտարեթիվ 1956թ |
| 7 | Վարձակալականհողամաս | | 120.000 | | Համայնքի սեփականություն | |
| 9 | Ավտոմեքենա ՎԱԶ 21214 | | | բավ | Համայնքի սեփականություն | 2013թ |

**Հացիկ գյուղ**

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հացիկի գյուղապետարանի շենք | Հացիկ համայնք 16 փողոց 1 շենք 04-058-045-008 | 4400 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1974թ, |
| 2 | Հացիկ գյուղի մշակույթի տուն | Հացիկ համայնք 4 փողոց 04-058-017-039 | 4908 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1971թ, վերանորոգվել է 2019թ |
| 3 | Հացիկ գյուղի մանկապարտեզի շենք | Հացիկ համայնք 3 փողոց 04-058-017-0008 | 3471 | վատ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1967թ, |
| 4 | Ասֆալտապատ ճանապարհներ | Հացիկ գյուղ 16 փողոց | 12000 | լավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 2020թ, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Ասֆալտապատ ճանապարհներ | Հացիկ գյուղ 4 փողոց և 15 փողոց | 900 | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1986թ, |
| 6 | Ասֆալտապատ ճանապարհներ | Հացիկ գյուղ | 69000 | վատ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1975թ, |
| 7 | Ջրմուղ | Հացիկ գյուղ | | բավ | Համայնքի սեփականություն | Կառուցման տարեթիվ 1965թ, |
| 8 | Ավտոմեքենա ՎԱԶ 21214 ՆԻՎԱ | | | բավ | Համայնքի սեփականություն | Արտադրման տարեթիվը 2013 |
| 9 | գյուղ.նշ վարելահող | 04-058-0271-0013 | 6073 | | Համայնքի սեփականություն | Վարձակալության տրամ. օրը 27.03.2019 |
| 10 | գյուղ.նշ վարելահող | 04-058-0271-0001 | 12014 | | Համայնքի սեփականություն | Վարձակալության տրամ. օրը 27.03.2019 |
| | | | ***Այգեվան գյուղ*** | | | |
| *1* | *Այգեվան համայնքապետարան* | *փողոց 8, շենք 8* | *800քմ* | *բավարար* | *համայնքային սեփականություն* | *1985 թ.* |
| *2* | *Ակումբ* | *փողոց 5 , շենք 12* | *1600քմ* | *վատ* | *համայնքային սեփականություն* | *1972թ.* |
| *3* | *Բուժ ամբուլատորիա* | *փողոց 7, 1-ին նրբ. 1-ին շենք* | *115քմ* | *բավարար* | *համայնքային սեփականություն* | *1962թ.* |
| *4* | *Խորքային հորեր* | | *12հատ* | *վատ* | *համայնքային* | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | սեփականություն | |
| 5 | Ասֆալտապատ ճանապարհ | | 3կմ | վատ | համայնքային սեփականություն | |
| 6 | Համայնքի կողմից հատկացված ժամանակավոր կացարան | փողոց 5 , շենք 13 | | վթարային | համայնքային սեփականություն | 1976թ. |
| 7 | Ավտոմեքենա | **VAZ 21214** | | | համայնքային սեփականություն | **2006** թ. |
| 8 | Վարձակալական հողեր | | 30, 7 հա | | համայնքային սեփականություն | |
| 9 | Այլ հողեր | | 104,1 հա | | համայնքային սեփականություն | |
| **Սարդարապատ** | | | | | | |
| 1 | Սարդարապատի համայնքապետարան | Արտիկան փողոց 74 շենք | 302 քմ | լավ | համայնքային սեփականություն | 1970 թ. |
| 2 | Մշակույթի տուն | Արտիկան 70 շենք | 1429 | լավ | համայնքային սեփականություն | 1951թ. |
| 3 | Երաժշտական դպրոց | Արտիկան 72 շենք | | վատ | համայնքային սեփականություն | 1946թ. |
| 4 | Ընտանեկան բուժկետ | Արտիկան 76 շենք | 658քմ | լավ | համայնքային սեփականություն | 2013թ. |
| 5 | ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ | 12-րդ փողոց 41 շենք | 262քմ | վատ | համայնքային սեփականություն | 1910թ. |
| 6 | ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ | 12-րդ փողոց 41/1 շենք | 422քմ | վատ | համայնքային սեփականություն | 1910թ. |
| 7 | Ասֆալտապատ ճանապարհ | | 27կմ | լավ | համայնքային սեփականություն | 2014թ. |
| 8 | Մանկապարտեզի շենք | 9-րդ փողոց 5 շենք | 5338 | վթարային | համայնքային սեփականություն | 1982թ. |
| 9 | Խորքային հորեր | | 25հատ | վատ | համայնքային սեփականություն | 1942թ. |
| 10 | Վարձակալական հողեր | | 17հա | | համայնքային սեփականություն | |
| 11 | LEXUS RX 400 H | | 211 ձ. ուժ | լավ | համայնքային սեփականություն | 2005թ |